77. ՊԸՆԼ ՂԱՐԱԴԱՂՅՈՒՑ ՀԱՔՅԱԹԸ

[Ամպ fշելը]

Իլա՛լ ա՛ չիլա՛լ մին շեն։ Մին դոնում էս շենս քշաթոխպը եկալ ա կոխալ։ Սահանք ասալ ըն, թա. «Էս մեզ յրա կռեվ ա եկալ, եկեք քյինանք ըստահանց թակենքյ, խռեկյ տանք»։ Մարթը մին փետ, չոմաղ ըն եր կալալ, ամմա մինն էլ մին լուծ ա եր կալալ։ Քյինացալ ըն տուրրթակ ընելավ շենիցը մին խիլլա՛ տեղ հռացալ, մին էլ նստ եշալ, տրեսալ վրեր թոխպը լիհա՛ հեն ա քմակներին։ Եշալ ըն տրեսալ, վրեր էն մարթը լուծ ա եր կալալ, մեչը ծակ ա։ Ըստրա փոնալ ըն թակալ, ըսպանալ, թա. «Տու վրեր ծակ փետ ըս եր կալալ, մեչավն անց ա կացալ էն ղոլը»։

Աստվածանից իրեք խնձոր վեր ինգյնի. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինը՝ չիլսողին։